Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. **Հանրային ծառայողի անունը, ազգանունը.**
   Լիանա Ղահրամանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Քենիայի Հանրապետություն (ք. Նայրոբի)՝ 2023 թվականի հոկտեմբերի 21-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 30-ը ներառյալ:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի Օզոնի քարտուղարություն (Ozone Secretariat):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրության Կողմերի երեսունհինգերորդ հանդիպմանը և էներգաարդյունավետության վերաբերյալ աշխատաժողովին:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   1. Մարտահրավերների գնահատում՝ կապված էներգաարդյունավետ սարքավորումների, դրանց մատչելիության և վերջինի բարելավման ուղիների հետ Կիգալիի փոփոխության իրականացման ընթացքում:
   2. Խոչընդոտներ, որոնք անհրաժեշտ է հաղթահարել՝ էներգաարդյունավետ սառնարանային, օդորակման և ջերմային պոմպերի սարքավորումների (RACHP) մատչելիությունը մեծացնելու և բարելավելու համար՝ օգտագործելով ցածր կամ զրոյական գլոբալ տաքացման ներուժի այլընտրանքներ:
   3. Աջակցող և հնարավորություն ընձեռող քաղաքականությունների ավելի լայն շրջանակի անհրաժեշտություն, որը կարող է օգնել արձագանքել հովացման և ջեռուցման ընդհանուր պահանջարկը կայուն կերպով բավարարելու մարտահրավերին՝ նվազագույն ազդեցությամբ գլոբալ կլիմայի վրա:
   4. Մոնրեալի արձանագրության Թրասթային հիմնադրամի բյուջեն և ֆինանսական հաշվետվություններ:

5. Մոնրեալի արձանագրության մարմինների 2024 թվականի անդամակցություն:
6. Մոնրեալի արձանագրության իրականացման Բազմակողմանի հիմնադրամի համալրում 2024–2026 եռամյակի համար:
7. 2026 թվականին քառամյա հաշվետվության պոտենցիալ ոլորտների հատկորոշում:
8. Ստրատոսֆերային աերոզոլների ներարկում և օզոնային շերտի պաշտպանություն:
9. Կարգավորվող նյութերի ոչնչացման հաստատված տեխնոլոգիաների ցանկի փոփոխություններ:
10. Խիստ կարճակյաց նյութերի այդ թվում՝ դիքլորմեթանի ներառում Մոնրեալի արձանագրության իրավակարգավորման տիրույթ:
11. Ինստիտուցիոնալ գործընթացների ամրապնդում:
12. ՀՖԱ-23-ի արտանետումներ:
13. Կորոնավիրուսային համավարակի (COVID-19) հնարավոր ազդեցություններ 5-րդ հոդվածի 1-ին խմբի երկրների վրա ՀՖԱ սպառման ենթատեքստում:
14. Էներգաարդյունավետ և ցածր կամ զրոյական գլոբալ տաքացման պոտենցիալ ապահովող (GWP) տեխնոլոգիաներ. Էներգաարդյունավետության վերաբերյալ աշխատաժողովի արդյունքներ:
15. Երկրների համատեղ պատասխանատվություն այն սարքավորումների անարդյունավետ դեմփինգի դադարեցնման նպատակով, որոնք պարունակում են հնացած սառնագենտներ:
16. Ածխածնի տետրաքլորիդի արտանետումների նվազեցում:
17. Հումքի օգտագործում:
18. Հալոնների և դրանց այլընտրանքների ապագա հասանելիություն:
19. Սառնագենտի կյանքի ցիկլի կառավարում:
20. Մոնրեալի արձանագրության ինստիտուտների ամրապնդում (ապօրինի առևտուր և այլն):
21. Գլոբալ մթնոլորտային մոնիտորինգի բացերի բացահայտում. վերահսկվող նյութերի և նման մոնիտորինգի ուժեղացման տարբերակների քննարկում:
22. Առկա մարտահրավերներ և ապագա կոնֆիգուրացիայի հնարավոր տարբերակներ:
23. Համապատասխանության և տվյալների հաշվետվությունների հետ կապված խնդիրներ:
24. Զարգացող երկրների վերադասակարգում (ԱՄՆ-Չինաստան):
25. Մոնրեալի արձանագրության Կիգալիի ուղղման վավերացման կարգավիճակ:

7. **Հանդիպումները, ելույթները.**

Գործուղման շրջանակներում իմ կողմից նախաձեռնվել են հետևյալ երկկողմ հանդիպումները.

- OzonAction-ի ղեկավար պարոն Ջիմ Քյորլինի հետ քննարկվել է Լեհաստան կատարվելիք մասնագիտական ճանաչողական այցի օրակարգային ու կազմակերպչական հարցերը:

- UNIDO-ի ներկայացուցիչ Ֆուկույա Ինույի հետ՝ քննարկելու Հայաստանի KIP ծրագրի լրամշակման հարցերը և 2024 թվականի Գործադիր կոմիտեի առաջին նիստին այն հաստատման ներկայացնելու վերջնաժամկետները, ինչպես նաև նոյեմբերին վերջինիս Հայաստան կատարվելիք այցի օրակարգային ու կազմակերպչական հարցերը:
- ՄԱԱԶԿ Նյու-Յորքի գրասենյակի ներկայացուցիչ պարոն Էթյեն Գոնայի հետ՝ քննարկելու ՄԱԱԶԿ-ի հետ աշխատանքի առանձնահատկությունները:
- Քուվեյթի, Հնդկաստանի, Քենիայի, Հարավային Աֆրիկայի, Միկրոնեզիայի, ներկայացուցիչների հետ՝ քննարկելու Մոնրեալի արձանագրության իրականացման Բազմակողմանի հիմնադրամի 2024–2026 եռամյակի համար համալրման անհրաժեշտ ծավալները 5-րդ հոդվածի կարիքները բավարարելու նպատակով:

Հայաստանի Հանրապետությանը վստահվել է շարունակել Խիստ կարճակյաց նյութերի վերաբերյալ Կանադայի, Ավստրալիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ-ի կողմից նախաձեռնած որոշման և Մեթիլբրոմիդի կարանտինային և նախաբեռնման օգտագործման վերաբերյալ Բոսնիա և Հերցեգովինայի, Եվրամիության, Չեռնոգորիայի, Հյուսիսային Մակեդոնիայի, Նորվեգիայի և Շվեյցարիայի կողմից նախաձեռնած որոշման նախագծերի քննարկման նպատակով ձևավորված ոչ ֆորմալ խմբի համաղեկավարի դերը Չեխիայի հանրապետության ներկայացուցիչ Յանա Մասիչկովայի հետ համատեղ.







Բացի այս, Հայաստանի Հանրապետությանը վստահվել է մասնակցել Մոնրեալի արձանագրության իրականացման Բազմակողմանի հիմնադրամի՝ 2024–2026 եռամյակի համար համալրման վերաբերյալ ձևավորված փակ աշխատանքային խմբի աշխատանքներին, որին հնարավորություն ունեին մասնակցելու զարգացող 144 երկրներից ընդամենը 12-ը:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Կողմերի երեսունհինգերորդ հանդիպմանն ընդունված որոշումները (թվով 27) հասանելի են Օզոնի քարտուղարության պաշտոնական կայքէջում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ դիտարկումները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Առաջարկում եմ.

- 2024 թվականին կայանալիք Մոնրեալի արձանագրության Կողմերի երկրների բաց աշխատանքային խմբի քառասունվեցերորդ հանդիպմանը և Մոնրեալի արձանագրության Կողմերի երեսունվեցերորդ հանդիպմանը մասնակցելու համար դիտարկել մեկ հոգուց ավել բաղկացած պատվիրակության ձևավորման հնարավորությունները, ինչը հնարավորություն կտա մասնակցելու մասնագիտական ավելի շատ աշխատանքային խմբերի քննարկումներին:
- UNEP OzonAction-ի կողմից Լեհաստան կատարվելիք մասնագիտական ճանաչողական այցի հրավերը ստանալու դեպքում ապահովել այցի նախապատրաստական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը:

*Գործուղվող* *Լիանա Ղահրամանյան*

*01.11.2023թ.*